


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հոկ. 8 Մլճ.
Գաւառացի 10 Մլճ.
Վերամեկ Կ. Պոլսոյ 4 Մլճ.
Գաւառացի 3 Մլճ.
Դանուցման տուրը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ ստիպարութիւն կը լա-
յայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳ

Յառաջիկայ նոր տարւոյն սկիզ-
բէն լրագիրս ամենօրեայ ընել որո-
շած ըլլալով, տպագրական անհրա-
ժեշտ պատրաստութեանց պատճա-
ռաւ յառաջիկայ շաբաթ օրը չպիտի
կրնանք հրատարակել, որոյ համար
մեր յարգող ընթերցողաց ներողամը-
տութիւնը կը խնդրենք :

Այս առթիւ դարձեալ կը ծա-
նուցանենք թէ լրագրոյս գրասեն-
եակին մանր մուկը գործող համար
մէկ երկու պարկեշտ և գոնէ մա-
քուր գէր գրել գիտցող տղայոց կամ
պատանեաց պէտք կայ: Ուղղող պէտք
է մեզ ներկայանայ լրագրոյս գրա-
սենեակը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղաքական առեւտրային հան-
դարտութիւն մը կը տրեւ: Եւրոպա-
կան մեծ նախարարք և կայսերք Պէր-
լինի դաշնագրութեան գործադրու-
թեան շնորհիւ խաղաղութիւնը պահ-
պանելու յոյս կը յայտնեն, և սիրելի
է մեզ որ այս յոյսն ի դեմք չենք:
Բ. Դուռը կաշխատի նմանապէս դաշ-
նագրութիւնը գործադրելու, բայց
երկամական ապահովելու իւր ջանքերը
կանգնաւորուծեն: Այս շաբթու դարձ-
եալ նախարարական խորհուրդներն
իրարու յաջորդելին թղթագրամի
խնդրոյն վրայ. երեքշաբթի օրն Օս-
մանեան Պանքան երկամական նոր մի-
ջոցին գործադրութեան սկսաւ: Բայց
գլխաւորաբար հատարակաց վստա-
հութիւնը վարանեալ վիճակի մէջ էր,
քանզի կրտսէր թէ Պանքային Կ. Պոլ-
սոյ և Ղարաթիոյ ճիւղերը միայն ժամ
ու կէս՝ թուահամարի կարգաւ՝ մին-
չեւ 10 լրացիլ թուղթ ամանակներուն
ոսկի տուել են, ուրիշ հաշիւ կը ըլլար
թէ օրը քանի մը հարիւր ոսկի միայն
կրնայ տրուել: Գուցէ այս պատճա-
ռաւ թղթագրամին ոսկիով տարբե-
րութիւնը փոխանակ ինչալու՝ քանի
մը շրջ վրայ դրաւ: Կրտսի թէ կա-
ռավարութիւնն իւր մեծ ծրագիրը
կը պատրաստէ թղթագրամին բարձ-
ման համար, և այն ժամանակ յու-
սալի է որ բարեօրում մը կրնայ տես-
նուիլ:

Առ այժմ թէ թղթագրամին վի-
ճակը, թէ՛ կառավարութեան պաշ-
տօնատարաց ամսականներուն դիմու-
մը ներքին վարչութեան վրայ լաւ
ազդեցութիւն չընեն: Թայմի լրագ-
րին փոքր Ասիա զրկած թղթակիցը
Տիարպէքիբէն գրած նամակին մէջ

տխուր նկարագիր մը կուտայ երկրին
վիճակին վրայ: Ամենուրեք անապա-
հովութիւնը տիրած է, թէ և Տէր-
սիմի և Ճիզըէի կողմերու ապստամ-
բութիւնը ըստ պաշտօնական լրոյց
զսպուած են: Թուրք ոստիկանութեան
զինուոր մ'այսպէս խօսեր է թայմի
թղթակցին:

Կը բաղձայի Ռուսիոյ մէջ գերի
ըլլալ: Չիս նայէ, անօթութենէ մեռ-
նելու վրայ է: Տասն և ութ ամսական
առած չեմ, և եթէ առնուով թուղ-
թով պիտի վճարուի: Չարաչար կաշ-
խատիմ և վարձք չեմ առնուր, մինչ-
դեռ Չէքքէզները չեն աշխատիր և
ուճիկ կընդունին:

Բայց Պ. Թղթակիցը կամ թայմի
չըսեր մեզ թէ ա'յս էին արդեօք Անդ-
ղիոյ երաշխաւորած փոքր Ասիոյ հրո-
շակաւոր բարենորոգումներն: Ստոյգ-
է որ թայմի կը չիտի Սրեւիցի մէջ
տիրած փոփոխական և անկայուն վի-
ճակէն, Անդղիոյ կողմէն բան մ'ը-
նելու հարկը կը տեսնէ, դեսպանին
ազդեցութիւնը գործածելու պէտքը
կը ճանչէ, և Թուրքիա, ինչպէս նաև
Պարսկաստան կամ Աֆղանստան, եւ-
րոպական երկիրներու չկրնալով նը-
մանիլ, անոնց նկատմամբ տարբեր
աշխարհավարութիւն մը կը յանձնա-
րարէ: Սակայն այսպիսի խորհրդա-
ծութիւնները բիւր անգամ տեսնը-
ւած են: Թուրքիա կ'առարկէ թէ
ստակի պէտք ունի բարենորոգմանց
գործադրութեան համար: Իսկ Անդ-
ղիա Ռամանեան փոխառութիւնն յի-
տաճեցելով և խորհրդարանին հաւա-
նութեան ենթարկելով, չոր ցամաք
խրատներ ու խորհուրդներ կը շտա-
յէ, որք 1856էն ի վեր զանազան ձե-
ւերով միշտ անպակաս եղան: Եւրո-
Ս. Սթրաթֆորտ Ռէտքլիֆէն սկսեալ
մինչև Սըր Լէյարտ՝ բոլոր Անդղիա-
կան դեսպանները Մենտրութեան
գեր կատարելութեան համար, բայց
գլխաւորաբար գործերը դարձեալ ի-
րենց բնական ընթացքին հետեւեցան:
Սակայն Սըր Լէյարտի առաւել յա-
ջողութիւն մարդկութեւ է, յօդուտ քա-
ղաքակրթութեան:

Ռուսիոյ մէջ վերջին ժամանակնե-
րը ուսանողաց կողմէ տեղի ունեցած
քաղաքական ցոյցերն Եւրոպական լը-
րագրաց ու շաբաթաթիւնն հրաւիրած
են Ռուսիոյ ներքին վիճակին վրայ:
Ռուսական թերթներն այն ցոյցերուն
նշանակութիւնը կը թերթեցնեն եւ
զադանի ընկերութեանց ձեռքով թ-
ւած պարզ անիշխանական ցոյցեր կը
համարին՝ առանց բնաւ կարեւորու-
թիւն ընծայելու: Բայց ժողովրդեան
ամեն կարգերուն հետ յարաբերու-
թիւններեցող և իրաց վիճակն ինտրո-
հետաքրքրող անձինք, մասնաւորապէս
Եւրոպական գիտաւոր լրագրաց թղթ-
թակիցը՝ կը հաստատան թէ ներկայ

կառավարական բացարձակ դրութեան
դէմ դժգոհութիւնն օր քան զօր ծա-
ւալելու վրայ է Ռուսիոյ ժողովրդեան
մէջ, և ասոր դիմաւոր ապացոյցնե-
րէն մին է՝ վերջինչեալ ցոյցերն ընող-
ներուն ցոյց տրուած համակրութիւ-
նը Բեդրսպուրկի, Մոսկուայի և այլ
քաղաքացի մէջ:

Գաղղիական Տէպալ լրագիրն՝ այս
համակրութեան պատճառը կամ շար-
ժառիթը փնտռելով՝ կը հարցնէ թէ
Ինչպէս այդ բարոյական կապը կըր-
ցեր է հաստատուել ժողովրդեան
այլ և այլ դասերուն միջև, յորոց ու-
մանք հլու, հնազանդ և անձնուէր
են, ումանք ալ մեծ մասամբ ամեն օ-
րինաց թշնամի խռովարարներ ու դա-
ւադիրներ: Պատճառն այս է որ, կը-
սէ, բնութեան մէջ ծածուկ համակը-
րութիւններ կան ամեն մարդոց յա-
տուկ, որոց կառավարութիւն մ'ու-
շադրութիւն պէտք է ընծայէ: Ար-
դարեւ ընկերութեան մ'այլ և այլ դա-
սերուն միջև, որչափ և բաժանեալ
լինին, գաղափարաց և զգացմանց մի-
ութիւն կրնայ լինիլ, որ փոխադարձ
չափուց շրջանակին մէջ զիրար չեն
մատնէր երբէք: Ժողովուրդը դարեւ-
րով կրնան կրել բռնաւարական օրէնք
մը, կամահաճ և բացարձակ կառա-
վարական դրութիւն մը, բայց միան-
գամայն անկէ ազատելու կը փափա-
քին: Եւ երբոր ազնուասիրտ վեհա-
պետ մ'իրենց չղթաները խորտակէ,
ինչպէս ըրաւ Աղէքսանդր Կայսրն իւր
դահակալութեան սկիզբը, կ'օրհնեն
անոր անունը: Իսկ միւս կողմէ բընա-
կան բերմամբ և ակամայ կը համակ-
րին այն անձանց, որք քաղաքական
նպատակաւ կամ ընդհանուր չափու-
շարժառիթով բուռն միջոցներու կը
գիւմեն և անիրաւ համարած օրէնքի
մը դէմ բիրտ կերպիւ կը բողոքեն:

Հասարակաց խղճին այս ցոյցերն ամեն
երկրի մէջ կան, և աւելի մասնաւո-
րապէս Ռուսիոյ մէջ, ուր քաղաքա-
կան ճնշումը խիստ մեծ լինելով, ար-
դիւնքն ալ բնականաբար արտադրող
պատճառին կը պատասխանէ: Այս-
պէս կրնայ մեկնուիլ տակէց քանի մը
ամիս առաջ վէրա Չասուլիցի ցոյց
տրուած հասարակային համակրու-
թիւնն, ինչպէս նաև վերջին օրերս
Բեդրսպուրկի բժշկական ճեմարանին
ուսանողներուն ցոյց տրուած ժողո-
վրդային համակրութիւնը:

Այս ամեն իրողութիւններէն ա-
նուրանակ ճշմարտութիւն մը կ'ար-
տադրի, այսինքն թէ Ռուսիոյ մէջ
բարենորոգմանց զգալի պէտք կայ,
որոց առաջինը կրնայ լինիլ կառավա-
րական բացարձակ դրութեան մեղ-
մայումն և արդի խիստ օրինաց չա-
փաւորումը:

Հեռագիրը լուր բերած էր թէ
Բեդրսպուրկի ուսանողներն ուղերձ
մը առլ ու վեր էին դահաժառանգ-

կայսրոգէւոյն, բայց ոստիկանութիւ-
նը թղլ չէր տուած: Յիշեալ ուղեր-
ձին մէջ, որոյ պատճենը կը բերեն Եւ-
րոպական լրագիրք, ուսանողները կը
յայտնեն թէ Ռուսիոյ ուսանողաց մէջ
ընդհանրացած յուզման պատճառը
Ռուս երիտասարդութեան անտանե-
լի վիճակն է: Վարժարաններէ դուրս
ապրող ուսանողք ոստիկանութեան
հսկողութեանը ներքեւ դրուած են:
վարժարանաց մէջ ապրողներն ալ օր
քան զօր իրենց իրաւունքներէն կը
կապտուին: Իրենց գործերուն վրայ
խորհելու համար մէկտեղ դուստրուե-
լու իրաւունքն առնուած է իրենց
ձեռքէն, նմանապէս փոխադարձ օգ-
նութեանց սնտուկ մը հաստատելու
թղլութեան չլինիլ: Եւ թէ՛ այս-
պիսի բան մ'ընելու փորձ փորձեն,
ոստիկանութեան կողմէ ծանր սպառ-
նալիք կը լինի իրենց: Ամեն անգամ
որ մէկ տեղ ժողովիլ ուղեցին, գրեթէ
մահուան սպառնալիք եղաւ իրենց:
Ամեն անգամ որ իրենց իրաւունքը
խնդրեն՝ յանուն օրինաց կը ցրուեն
զիրենք: Չափահաս անձանց հարկ
եղած անկախութեան զրկում և
տղայոց տեղ դրուած են: Բարձրագոյն
կրթութեան ճանքան փակող արդեւը-
ներն օր քան զօր կը մեծան, որով
կրթութիւնը քիչ ժամանակէն հա-
րուստներուն մենանորձ պիտի լինի:
Ահա այս և ուրիշ հարստահարութիւն
ներն են իրենց յուզման միակ պատ-
ճառն:

Այս յայտարարութիւններն ընե-
լով ուսանողք դահաժառանգ կայս-
րոգէւոյն միջնորդութիւնը կը հայ-
ցեն ի նպատ իրենց խաբրովի աշա-
կերտակցաց, և ընդհանրապէս ու-
սանողաց ներկայ վիճակին վրայ իւր
ուշադրութիւնը կը հրաւիրեն:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Թուեալ 7 յունիս
Թուեալի պէջը Գաղղիոյ նկատմամբ
ունեցած բարեկամութիւնն ապացուցա-
նել ուղեւոր, Սոսի Գաղղիացոյն խնդրել
կարդադրելու համար իւր արտաքին գոր-
ծոց նախարարի խորհրդակա՛ն Մօսամէլ
Պաքուշ զօրավարը Փարիզ զրկեց:

Փարիզ 7 յունիս
Գաղղիական կառավարութիւնը Թու-
եալի պէջին հաշտարար ընթացքը բաւա-
կան համարելով, սպառնական ծանու-
ցադիր մը զրկեց ի Թուեալի պահանջելով
որ յունիս 7-ին Թուեալի Գաղղիական
ընդհանուր հիւպատոսին ուղղեալ հեռագը-
րին մէջ նշանակեալ պայմաններն անմի-
ջապէս գործադրին:

Լազոր 7 յունիս
Աֆղանք Հնդկաստանի հողը կարգա-
ւեն: Անգղիացիք սպառնացեալ կէտերը
կամրացնեն:

Կաղուպ խան յանձն չառնուր հաշ-
տութեան բանակցութիւն ընել Անգղիա-
ցոց հետ:

Լոնտրա 7 յունիս
Սթանտարտ լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսը ասորի լին արտի մեկնին Պուլ- զարիայէն ու Բուսիլիէն :

Այս անգամ հասած հետաքրքր
Բեդրստուրի 7 յունիս
Փոքեայի հիւանդութիւնն աւելնալով, Սարաթովի նախագին մէջ գգուելովեան ազդու միջոցներ ձեռք առնուեցան :

Նիւ-Եօրք 7 յունիս
Մեացեայ հաշմանդաց բամպակի ստա- ջին գործարանը գործաւորաց աշխատու- թեան տեսողութիւնը կէսի ինչոց :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանը նոր պատուանը- ղան մը սահմանեց «Երկունը իմ իրազ» անուամբ, զոր տէրութեան պինու- րական, քաղաքական, վարչական և դրական ծառայութիւններ մատու- ցանողներուն պիտի տայ անձամբ :

Մայրաքաղաքի Ռուսական դե- պան Լուպոնով իշխանը շարաթ իրի- կուն մեծ պարահանգէս մը պիտի տայ Բեդրստուրի դեպարտման պատար- Սոյն պարահանգէսին հրաւիր- եալ են տէրութեանց դեպարտները, Բ. Դուան նախարարներն ու բարձր պաշտօնաւորներն և Ռուսաց զին- ւորական հրամանատարներն, որք փոխպէսն ու Ադրիանուպոլսէն հե- տեցան Է. Պոլսի կուգան իրենց տիկ- նանց հետ :

Վաղըթ լրագիրը կը ծանուցա- նէ թէ Արեւելեան Բուսիլիի նախա- դին մէջ Ռուսաց մեկնելէն ետեւ Եւ- րոպական տէրութեանց կողմէ զորք դրուելու զրոյցներուն ստորդ կամ անստորդ ըլլալը հասկնալու համար Բ. Դուան տէրութեանց դեպարտներէն տեղեկութիւն խնդրեց է, բայց ա- նոնք պատասխան տուեր են թէ բը- նաւ տեղեկութիւն չունին :

Նոյն լրագիրին խօսքին նայելով, երկուական յանձնաժողովը տէրու- թեան դանձուն Պիւտմէն աւար- տելով՝ երկուական բարենորոգմանց յանձնաժողովին քննութեանը ներ- կայացուցեր է : Սոյն պիտի մէջ տէրութեան սովորական ծախսոց դուստրը 20 միլիոն լիւրա հաշիւ ե- ղած է :

Օսմ. Պանքան ինչպէս երէկ և առջի օրը, նոյնպէս և այս առաւօտ իւր փոխանակելիք լիւրային 402 զըշ գին դրած է :

Ներկումիդ իւր ծովածոցը վերադար- ձող անգղիական նաւատորմին զըրա- հաւորներէն միայն թնդանօթը պայ- թելով վերաւորեալ անգղիացի զօրա- կանաց խնամատարութեան համար՝ Վեհ. Սուլթանն իրմիտի կայսերական քննչին անոնց արամադութեան ներ- քու դնել հրամայեց :

Ճէրիտէի Հալատիւ կը ծանուցա- նէ թէ Սիւլէյման փաշայի դատա- տանը տեսնող պատերազմական առ- եանն իւր դատաւճիւրը տուեր է, որով Սիւլէյման փաշա զինուորական աստիճաններէն զրկուելով 13 տարի աքսորանաց կը դատապարտուի :

Դատաւճիւրը 12 յօդուածէ կը բաղկանայ, որոց մին կընէ թէ Սիւ- լէյման փաշան անցեալ տարի խալի- Պօղազի կիրճը չէ անցեր և Շուսուի բանակին հրամանատարին չէ օգներ :

Երէկուան Վաղըթ լրագիրը լուր կուտայ թէ խալի Շէրիֆ փաշան, որոյ խելքին եկած է, մահամբձ վիճակի մէջ :

Վառնայէն եկած նամակներէ և ուղեւորներ լուր կը բերեն թէ քա- ղաքին Յոյն և Հայ երիտասարդները Պուլղարիոյ նորակազմ իշխանութեան համար վիճակաւ զինուոր դրելու առ-

թիւ մեծ խաղաղութիւն երբ է քա- ղաքին մէջ : Սեյցեայ հիւնդարթի օ- րը բոլոր Յոյն և Հայ ժողովուրդն արք և կանայք յունաց եկեղեցին դուստրուելով բողոք և աղաղակ բար- ձեր են իրենց առաջնորդաց, և դը- խաւորներուն գէմ : Ռուսաց պահա- պան զօրքն և քաղաքին կառավարի- չըն հան երթալով նախ յորդորեր և յետոյ սպառնալիք ըրեր, բայց չեն յաջողեր ժողովուրդը ցրուելու, վեր- ջապէս Ռուսաց զօրքը ևս քաջուե- լով, բաղմաթիւնն ալ ցրուեր է :

Վառնայէն եկող վերջին չորեան- ւով 25-30 Հայ երիտասարդ եկան Կ. Պոլսի, զինուորագրութենէ ազատ մնալու համար :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ	
27 դեկտ. չորեքշաբթի իրիկուն	12.25
28 դեկտ. հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	12.27
կէս օրին	12.28
բուսիլի երկաթուղի	Փր. 44
Թղթադրամ	Լր. 420

ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱԽԻՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒՄԱՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յա- ռաջիկայ ուրբաթ գեկտ. 24 ի Դա- լաթիւ :

Ատենան պիտի բացուի ճիշդ ժամ 6ին և գոյուի 10ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Է- ֆէնտիւնը, իրենց աղդատական պարտականութիւնը կատարելու փու- թալ :

20 դեկտ. 1878
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլսի

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՑ
ՆԵՐՔԻՆ ԱՐԲԵՊԵՍԿՈՒՄՈՍ

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկագիր համարակալութեան գիւտին՝ ի վերայ պիւտմէի :
2. Ընտրութիւն երրորդ տաննա- գըպին :

Ատենադպիր
Մ. Յ. ՄԵԼԷԷ

Երեքշաբթի իրիկուն Բ. Դուան գիր մ'եկաւ Ս. Պատրիարք հօր՝ յայտ- նելով թէ Ֆուրուզի վանահայր Նի- կողայոս Եպիսկոպոսին ծանր յանցա- պարտութիւնն ապացուցեալ ըլլալով հանդերձ, Բ. Դուան որոշեց է ի չը- նորհս Ս. Պատրիարք հօր՝ Պատրիար- քարանի պահպանութեան յանձնել զայն, այս պայմանաւ որ պարձեալ դատաւարանը տեսնուելով իւր յան- ցանաց արժանի պատիժը կրէ :

Կը լսենք թէ Ս. Պատրիարք հայ- րը՝ կրօնական գործոց տեսուչ Ջուլէր պէյի ձեռք ևս բերուած հրաժա- րագիրն երէկ նորէն Բ. Դուան զըր- կեր է :

Յունաց Ծննդեան տօնին առթիւ երեքշաբթի օրը Պատրիարքական փոխանորդը Քարու քէհեասի էֆէն- տիին և այլ քանի մը վարդապետաց և քահանայից հետ Յունաց Ս. Պատ- րիարքին շնորհաւորութեան գնաց և օրաթիւր պատուով ընդունուեցաւ Ն. Սրբազնութեանէն :

Ազգային Հիւանդանոցի Հոգա- բարձութիւնն, Հիւանդանոցին վե- րաբերեալ կալուածական խնդրոյ մը առթիւ՝ մայրաքաղաքի Հիւանդանոցի դեպան Վսեմ. Պ. Գուստուրիթի հետ տեսակցիլ հարկ դատած ըլլա- լով, կը լսենք թէ երէկ իրիկուն Հի- ւանդանոցի Հոգաբարձութեան ան- գամներէն Սեմ. Սիւսեան Սարգիս

և Մկրտանէար Պետրոս էֆէնտիւնը Մինաս Ջերալ էֆէնտիի հետ մ'ա- ղեպանին ներկայացեր և խնամա- րալիք ընդունելութիւն գտեր են : Վսեմ. դեպանն Հոգաբարձու- թեան խնդիրն անյապաղ կատարել խոտանալէ յետոյ, Հայոց ազգին վրայ մեծ համակրութեամբ խօսեր և Ս. Պատրիարք հօր նկատմամբ ալ ըս- քանչացում յայտնեց է :

Ռուսական բանակին մինչև Ա. յիմէֆանոս յառաջացած ժամանակ Ա. Յօրիկի մեր աղգային վարժարա- նըն ու եկեղեցին ֆուտուած լինելով, Ս. Պատրիարքն այս մասին պէտք եղածը Ռուսաց Վսեմ. դեպանին ծանուցած և նա ալ թօթլէպէն դո- րաւարին հաղորդած էր :

Այս անգամ կիմանաւք թէ Լօ- պանօֆ իշխանին կողմէ 3000 տրծաթ ռուպլի՝ այսինքն 580 Ռուսական Բօլ և 12 Ֆրանք յանձնուեր է Ս. Պատ- րիարքին՝ յիշեալ աղգային հաստա- տութեանց նորոգութիւնը կատարե- լու համար :

Ազրիանուպոլսոյ Ռուսական բա- նակին քաղաք հեծելազօրաց հըրա- մանատարներէն Հայազգի բնիկ Տըփ- իլիսեցի Ազարիանց լեւոնիքէ Պ. Նի- կողայոս Հէքիմեան աշխոյժ և երի- տասարդ զինուորական երկուշաբ- թի օր Ազգ. կրօնական ժողովոյն ներ- կայանալով խնդրեց որ իրեն ամուս- նութեան առնելիք բնիկ Աւստրիացի Լիզա կերպանան Հրեայ աղջկին ըն- դունուի ի ծոց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ և յետ մկրտութեան պը- սակեն զինքը ընդ Լիզա օրիորդին կրօն. ժողովը թէ յիշեալ Հայազ- գի զինուորականին և թէ Հայաստան- եայց քրիստոնէական Ս. եկեղեցին ընդունիլ փափաքող Հրեայ աղջկան պէտք եղած հարցաքննութիւններն ընելէ յետոյ, որոշեց որ Պ. Ն. Հէ- քիմեան Լիզա օրիորդն իրեն կնու- թեան առնելուն և թէ ինքն արդէն ամուսնացած չըլլալուն մի վկայագիր բերէ Ռուսական դեպանատունէն և մկրտութիւնն ու պսակագրութիւ- նըն ըլլայ :

Ժողովոյն սոյն որոշման վերայ Պ. Ն. Հէքիմեան իւր գոհունակութիւնն յայտնելով մի առ մի ժողովականաց իւր յարգանքը մատոյց իւր նշանած օրիորդի հետ և մեկնեցաւ :

Երկու օր յառաջ լսեցինք թէ յիշեալ զինուորական հրամանատարն այդ պահանջուած գրքին բերելու և ժողովոյն որոշմանը ալ բերելի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ մէջ գոր- ծադրուեր է : ԼՈՅՍ

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

Հրագիր Հայկական խնդրոյն ի նպատակ և ընդգէմ խօսող ու գոր- ծող քանի մ'անձանց տրուած առատ պարգևներուն մեր ալ բաժանորդ ըլլալը մեզ իմացնելու բարեկամու- թիւնն ըրած էր : Մեք ալ չուզելով այդ անգոյ պարգև արաչխութեանէն զուրկ լծալով մեր յարգոյ պաշտօ- նակիցն, որ հինգ տասն զըշ շահե- լու համար սուտ լուրեր ու նամակ- ներ յերկրեալ դժբաղդ հարկին մէջ կը գտնուի, խնդրեք էինք իրմէ որ եթէ բարեհաճի յայտնել թէ ինչ էր այդ պարգևին գումարը, ո՞վ ար- ձած է մեզ և երբ, վստի զի մեր ձեռքն այդպիսի գումար մ'անցած չըլլալով, հաւանական էր որ մէջ խա- զացած կամ մէկուսի կոկորդն անցած ըլլար, և խոտացեր էինք որ եթէ կարենայ ասոնք յայտնել և դրամն երեւան հանել, կէսն իրեն տանք :

Այս հեղեղական տողերուն իմաս- ար չհասկցող հինգ տարեկան տղայ

մ'իսկ չէր կրնար գտնուիլ, բայց մեր նրբամտ պաշտօնակիցը չէր կ'ըն- հատկընտել և շուրջ խոտում մ'ըն- ծելով՝ ընթերցողներն իւր վրայ ծի- ծաղեցնելու համար բացարձակապէս մերժեց է իրեն ներկայացուցիլ կողմից գումարն, առանց գոյութիւնը կատ- րենալ հաստատելու, և առաւել ծի- ծաղեցնել տայ է որ եթէ ուզէ եղեր, ինք ալ կրնայ եղեր գումար մ'ստա- նալ, բայց իւր աշխարհածանօթ ան- շահասիրութեամբ չէ ուզեր՝ որպէս զի իւր պաշտօնին և դրից պատիւն անաղարտ պահէ : . . .

Այս փառաւոր յայտարարութե- նէն ետեւ, որ անշուշտ ապուշներու սքանչացումը կը հրաւիրէ իւր վրայ, Լրագրոյ Մեծ. խմբագիրն ուրիշ ան- ձանց վերաբերեալ հարցումներ կընէ մեզ և պատասխան կը պահանջէ : Այս անտեղի պահանջման մեր պա- տասխանն այս է թէ մեք ուղղակի մեր անձին վերաբերեալ պատուոյ կէտի մը վրայ զիջանք իւր հետ խօսելու : Իսկ այլոց համար՝ ոչ ինք մեզ հար- ցում ուղղելու իրաւունք կրնայ ու- նենալ, ոչ ալ մեք պատասխանելու պարտականութիւն : Իսկ իւր ծաղ- րաշարժ անաղարծութեան վրայ մեր ծիծաղը չիրեալ բռնաշուռ համար ալ ոչ ոք կրնայ մեզ մեղադրել :

Հալաթիւ 28 դեկտ. 1878

. . . Խմբագրապետ Մարիս պատուա- կան լրագրոյ :

Հրագիր անուն խեղճատակ թերթին խմբագիրը, Պ. Մինաս Ջերալի գէմ եր- կար ժամանակէ ի վեր տոժած շար նու- խանուն յաղուրդ մը տալ փորձէն և այս ձախող փորձին մէջ Ջեր մեծապատ- ւութեան և Պ. Գարեգինի ապաւինե- լուն շնորհիւ մերկանալով խայտառակ- ւելէ յետոյ, իւր երէկուան թերթով ինք- զինք անհաշալկողի անձ մը և Ջեր մե- ծապատութեանը շահաւէր խմբագիր մը ներկայացնելու կը յանդգնէ իւր սովո- րական անամօթութեամբ :

Հրագրոյ մատնիչ խմբագրին ո՞ր աս- տիճան շահամուլ անձ մ'ըլլալը՝ Կովկաս- եան յեղափոխութեան պոռաւոր սուտերը յերկրեալ ժողովուրդը խորեւել և ան- կէ ստակ քաղելու անպատկառ փորձէն ի վեր հանրածանօթ եղած է : Բայց կան ուրիշ շատ իրողութիւններ ալ որք նոյնը հաստատելու կը ծառայեն : Ասոնցմէ մէկը մասնաւորապէս ծանօթ ըլլալով ինձ, ա- լելորդ չեմ համարիր յիշատակել զայն Ջեր պատուական թերթին միջոցաւ, որ- պէս զի ժողովուրդը քաջ դիտանայ թէ ո՞վ է շահախնդիր խմբագիրն և ո՞վ անշահ- սէրն :

Սեյցեայ տարի, Սրբաւորեան բաղ- մարդին ընկերութիւնն Զ. Կողմէ բաղ- կացեալ ծանուցում մ'ունէր աղգային թերթերու մէջ հրատարակել տալու Գոր- ծադիր ժողովոյ անդամներէն մին Ջեր մեծապատուութեան զինքով նոյնին հը- րատարակումը խնդրեց, ծանուցման հա- մար հարկ եղած ծախքն ալ վճարել ա- ռաջարկելով : Ջեր մեծապատուութիւնը սա պատասխանը տուաւ : «Արար, ընկե- րութիւնն աղգային օգտին կաշխատի անձ- նուիրաբար, Հայ խմբագիր մ'ամօթ է ըս- տակ առնուլ այսպիսի աղգօգուտ ընկերու- թեանց ծանուցումներուն համար, զոր միշտ պատրաստ եմ ձրիապէս հրատարա- կելու : Եւ Բոլոր աղգային թերթերու խմբ- բաղիրներն ալ նոյն պատասխանը տալով նոյն կերպով վարուեցան : Միայն մեր մատնիչ խմբագիրն յայտնեց թէ՝ մինչև որ տասնոց թուղթ մը չառնուի չափաւ յօ- ժաղի այդ ծանուցումը հրատարակելու, և այսպէս ալ դորձադրեց :

Արեւմտ ծաղրելի չէ՞ տեսնել մինչև ան- զամ տասնոց թուղթի մը խոտարճող խմբ- բաղիր մը, որ իւր երկուսն թուղթ եղեր վեհանաճութիւն կը ծախէ և հարկաւոր ոսկիներ մերժելու պատրաստ ըլլալը կը յայտնէ, իւր ընթերցողներն իրեն պէս ասմար կարծելով :

Աղգին մէջ կոյ օգտակար անհատ մը

7. 11. 1960 1985